ՀՐԱՎԵՐ N S 8

18.04.2013թ.

2014թ. ապրիլի 18-ին «Հայաստանի երիտասարդ իրավաբենների ասոցիացիա» հասարակական կազմակերպության, այսուհետ՝ ՀԵԻԱ, պաշտոնական կայքում (www.ayla.am) հրապարակված հայտարարության հիման վրա տրամադրում ենք Ձեզ սույն հրավերը:

Գնման առարկա է հանդիսանում Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման հարցերով փորձագիտական օգնության տրամադրումը, մասնավորապես՝ հակակոռուպցիոն դասընթացների ժամանակ միջազգային հակակոռուպցիոն փորձի ներկայացումը, կոալիցիայի ձևավորման ժամանակ՝ միջազգային հակակոռուպցիոն կոալիցիաների փորձի ներկայացումը, անկախ հակակոռուպցիոն մարմնի ստեղծման և ապօրինի հարստացման քրեականացման միջազգային հաջողված փորձի և մոդելների ներկայացումը:

Հայտը պետք է պարունակի հղում սույն հրավերի վրա, անհրաժեշտ նյութերի պատրաստման գինը, ժամկետը և որակի մասին տեղեկություններ:

Մասնակցության համար Ձեր կողմից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

1. հայտ,
2. հայտարարություն,
3. անձնագիր (պատճեն),
4. փաստաթղթեր, որոնք հաստատում են դիմողի մասնագիտական փորձառությունը,
5. փաստաթղթեր, որոնք հաստատում են լեզուների իմացությունը:

Մրցույթի հաղթող կճանաչվի այն անձը, որը կներկայացնի ամենացածր գնով, սեղմ ժամկետներում և պահանջվող որակով Գնման առարկայի հայտ:

Հայտում նշված գինը պետք է ներառեն հարկային ծախսերը:

Հայտերը պետք է ներկայացվեն ք. Երևան, Նալբանդյան 7/2 հասցեով՝ մինչև 2014թ. ապրիլի 28-ը ժամը 10.00-ը:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումները կարող եք ստանալ ՀԵԻԱ գնման հանձնաժողովի նախագահ Արտակ Սարիբեկյանից՝ զանգահարելով +37410 580298 հեռախոսահամարով:

Հայտերը բացվելու են 2014թ. ապրիլի 28-ին, ժամը 12:00-ին:

Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ այցելելով ծրագրային կայքը հետևյալ հասցեով http://iravaban.net/en/eu-project-en: